ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 30-ին ժամը 11^{00} -ին Թումանյանի համայնքապետարանում տեղի կունենա Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Դսեղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի աճուրդ-վաճառք և վարձակալության մրցույթ 4 լոտով:

Լոտ 1. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ. Դսեղ, 12-րդ փողոց, 3/4 հասցեում գտնվող կադաստրային քարտեզի 06-035-0106-0016 ծածկագրում գտնվող 0,64367 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք: Մեկնարկային գին սահմանել 12200000 (տասներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Լոտ 2. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0142-0021 ծածկագրի 1.665525 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով: Մեկնարկային գինը սահմանել տարեկան 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

Լոտ 3. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0135-0071 ծածկագրի 0.36455 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով: Մեկնարկային գինը սահմանել տարեկան 8000 (ութ հազար) ՀՀ դրամ:

Լոտ 4. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0108-0099 ծածկագրի 0,96258 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով: Մեկնարկային գինը սահմանել տարեկան 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

2. Հողամասերի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%– ի չափով, իսկ մրցույթի վարձակալության նախավճարի չափը սահմանել մենարկային գնի 5%–ի չափով, աճուրդի և մրցույթի մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան: Հողամասերի որակական հատկանիշները՝ հարթ և թեք ռելիեֆ:

Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50% -ի չափով, իսկ մրցույթի մասնակիցները՝ տվյալ հողամասի մեկնարկայինգնի 5% -ի չափով: Եթե մասնակիցն աճուրդի կամ մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարը վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդում և մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդին և մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն:

3. Աճուրդի և մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Թումանյանի համայնքապետարան՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական 1: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի և մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ: Հեռախոս՝ 098-048-046